ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2024 թվականի N 1980 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N 1135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ 8-Ի N 1251-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 1716-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57-րդ և 57.1-ին կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Մի շարք գնման պայմանագրերում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին» N 1135-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 1-ին կետում «18» թիվը փոխարինել «17» թվով.

2) 1-ին կետի 1-ին պարբերությունից հանել «07.08.2020 թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ20/2,» բառերը.

3) 3-րդ կետում «27.53» թվերը փոխարինել «38.9» թվերով.

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով՝

«8. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մոդուլային շենքի կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում՝ փոփոխություններ կատարելով «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2020 թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրում՝ պայմանագրի գնի 23.24 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը։»։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի «Մի շարք գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» N 1251-Ա որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով՝

«3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված փոփոխությունները կատարելիս ծավալները վերահաշվարկելիս հիմք են ընդունվում պայմանագրերին կից ծավալաթերթերով սահմանված աշխատանքների կատարման նախահաշվային միավոր գները, իսկ նոր տողերի առաջացման դեպքում՝ սահմանված կարգով հաշվարկված և դրա արդյունքում նախագծային փաստաթղթերով նախատեսված միավոր գները։ Ընդ որում՝ վերահաշվարկը կատարվում է՝

1) տեղակապումն իրականացնող նախագծող կազմակերպության կողմից, և տեղակապման նախագծի հետ ներկայացվում է պարզ փորձաքննության.

2) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ նախատեսված կարգավորումը։»։

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 31-ի «Գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» N 1716-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«1) տարածվում են 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման հիման վրա կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքված այն պայմանագրերի վրա, որոնց շինարարության թույլտվությունները չեն ստացվել պայմանագրերում սույն որոշումից բխող փոփոխությունները կատարելու օրվա դրությամբ:».

2) 2-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

4. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին Երևանի հ. 37 հիմնական դպրոցի մարզադահլիճի շենքի վերակառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում՝ փոփոխություն կատարելով 2022 թվականի ապրիլի 1-ին «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/15 պայմանագրում մինչև պայմանագրի ընդհանուր գնի 18.27 տոկոսի չափով, իսկ Երևանի հ. 37 հիմնական դպրոցի մասով՝ 16.35 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

5. Թույլատրել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Խոտ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում և փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություն կատարելով 2024 թվականի հունվարի 31-ին «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի հետ կնքված՝ պետության կարիքների համար գնման N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/15 պայմանագրում՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում և փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություն կատարելով 2024 թվականի հոկտեմբերի 30-ին «Գրանդ Այյանս» ՍՊԸ-ի հետ կնքված՝ պետության կարիքների համար գնման N ՀՏԶՀ-ԴԲՄ-

ԱՇՁԲ-2024/109 պայմանագրում՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները.

3) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի ք. Նոյեմբերյանի վարժարանի (ք. Նոյեմբերյանի թիվ 1 ավագ դպրոցի տեղակայման վայրում) կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում և փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություն կատարելով 2024 թվականի հոկտեմբերի 22-ին «Վի Քեյ Գրում» ՍՊԸ-ի, «Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ-ի և «Գազշին ՄՁ» ՍՊԸ-ի ՀԳ-ի հետ կնքված՝ պետության կարիքների համար գնման N ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/104 պայմանագրում՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները.

4) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրահովիտ բնակավայրի կրթահամալիրի կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություն կատարելով 2024 թվականի փետրվարի 21-ին «ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի ու «Գրանդ Այյանս» ՍՊԸ-ի ՀԳ-ի հետ կնքված՝ պետության կարիքների համար գնման N ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1 պայմանագրում՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետերի պահանջները:

6. Սույն որոշման 5-րդ կետով սահմանված պայմանագրերի փոփոխությունների կատարման արդյունքում ծավալները վերահաշվարկելիս հիմք են ընդունվում պայմանագրերին կից ծավալաթերթով սահմանված աշխատանքների կատարման նախահաշվային միավոր գները, իսկ նոր տողերի առաջացման դեպքում՝ սահմանված կարգով հաշվարկված և դրա արդյունքում նախագծային փաստաթղթերով նախատեսված միավոր գները: Ընդ որում՝ վերահաշվարկը կատարվում է՝

1) տեղակապումն իրականացնող նախագծող կազմակերպության կողմից, և տեղակապման նախագծի հետ ներկայացվում է պարզ փորձաքննության.

2) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ նախատեսված կարգավորումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և որոշման 3-րդ կետի գործողությունը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 31-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ